

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻՍ

Տարեկան 12 Ժր.

Վեցամսեայ 6 Ժր.

ԱՐՏԱՍՍՈՇՄԱՆ

Երկու քիւր մէկ ծրարով

Տարեկան . . . 14 Ժր.


Վեցամսեայ . . . 7 Ժր.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2. 60 Տօյար
Վեցամսեայ 1. 50 »

Կ Ա Ն Ո Ի Կ

Մանուգրան ստոր
20 տարեկիւ



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵԲՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

Կրտսերները եւ լեւ
տրտիր

Illustration journal

Ir vounk

VARNA (Bulgaria)

Редакция

на ВѢСТНИКЪ

Кравуник

ВАРНА

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿՈՎԿԱՍԻ ՄԵԶ

Ռուսահայոց երկու գլխաւոր
կուսակցութիւններու օւկաննե-
րը համարուող «ՆՈՐ-ԴԱՐ» և
«ՄՇԱԿ» օրաթերթերու շատ մը
նոր թիւերը այսօր մեր առջեւը
ունինք. այդ թերթերը մամուլ
կատարեալ ազատութիւն վայելե-
լով, յեղափոխական և ազգային
ամեն խնդիրներու վրայ այժմ
ազատ համարձակ կը գրեն:

Հայերու և թաթարներու մի-
ջեւ ծագած կռիւներու ատեն
հայ յեղափ. կուսակցութիւննե-
րու ցոյց տուած կորսով ու գոր-
ծունեութիւնը կը գնահատուին
թէ Մշակ էն և թէ Նոր-Դար էն.
բայց այս երկու թերթերն ալ
չեն վարանիր քննադատելու և
մատնանիչ ընելու այդ յեղափ.
կուսակցութեանց այն սխալ գոր-
ծունեութիւնները սրտնք աղետ-
քը մեծցնելու և բազմապատկե-
լու պատճառ կըլան:

Մշակ գեկու. 31 թիւին մէջ կը-
սէ յեղափոխականներուն ուղղե-
լով.

Պէտք է ամեն ջանք գործ դնել,
որ սխալներ կարելի եղածին չափ քիչ
տեղի ունենան եւ ռեակցիայի ձեռքը
տրված չը լինեն այնպիսի գունաւոր
ստիճան. որոնք ռեակցիայի (յետա-
դիմական կուսակցութիւն) համար հիմք
ծառայեն իր գլուխը բարձրացնելու,
ժողովրդականութիւն չահելու եւ մար-
դիկ դէպի ինքը գրաւելու:

«Այդ տեսակետով, օրինակ, մենք
անտակաւորութիւն եւ սխալ ենք հա-
մարել թիֆլիս քաղաքում «գիտութեան
ապստամբութիւն» առաջացնել: Նախ
այդպիսի մի ապստամբութեան գա-
ղափարը թիւր կերպով է մինչեւ
այժմ հասկացվել ուսումնարանաց կող-
մից եւ յոյս էլ չկայ, որ հասկացուի իր
խկական իմաստով, ընդհանուր շահե-
րի տեսակետով. իսկ երկրորդ, նա
իրապէս չէ կարող աջողութիւն ու-
նենալ, որովհետեւ զօրքը չի անց-
նի թիֆլիսի ամբոխի կողմը եւ ա-
մենակատար իշխանադրութիւն ցոյց կը
տայ մի այդպիսի փորձի: Մենք այլ-

եւս չենք խօսում այն բանի մասին,
որ խա.ար ու ժերի. խուլիզանների եւ
բարբարոսական հրոսակների համար
բացված կը լինի մի ընդագծակ աս-
պարէզ աւերելու, հրգեհնելու եւ կո-
ղոպելու երկու տարիների ընթաց-
քում կառուցած շինութիւնները եւ
զիջած հարստութիւնները: Մենք կա-
րող ենք հաշտվել այդ գոհների հետ,
եթե զիջանք ինք. որ նրանք անհրաժեշտ
տրվել են հոյակապ հետաքննելու ըս-
տանալու համար: Բայց արդիւնքը այն
կը լինի որ գոհներ տրված կը լինին.
իսկ նպատակը քոյուղովին չիրականա-
ցած եւ նոյն իսկ բարոյապէս չգնա-
հատված:

Իսկ «ՆՈՐ-ԴԱՐ» բազմաթիւ յո-
ղուածներով հայ յեղափ. կու-
սակցութեանց խելաւ և արկա-
ծախնդիր ընթացքը քննադատած
և զուտ ազգային ուղղութիւն թե-
լադրած ըլլալով շատ մը առիթ-
ներու մէջ, այս անգամ ալ «պէտք
է պարզել թէ ինչ ենք ուզում»,
խորագրին տակ յողուածով մը՝
զոր կարտատպենք մեր ներկայ
թիւով, կապացուցանէ թէ Կովկա-
սահայոց լուրջ բանիմաց և ըս-
տուար մեծամասնութիւնը հե-
ռու կը մնայ Հնչակեան և Դաշ-
նակցական կուսակցութիւններէն,
որովհետեւ այս երկուքն ալ, —
մին Սօսիալ-Դեմոկրատ և միացած
Ռուս Ս. Տ. Բ. կուսակցութեան
և միւսը իբր զուտ ազգային շա-
հերէ չառաջնորդուող կազմակեր-
պութիւն մը—սխալ ճամբաներով
ազգը վտանգներու և արկածնե-
րու մէջ կը մխրճեն:

Ամբողջ Կովկասահայը կամ ա-
սոր մէկ կարեւոր մասը իրենց
հետ ունենալու պարծենքոտու-
թեամբ խօսող այդ երկու յեղափ.
կուսակցութեանց բարոյական ու
ֆիզիքական ուժը և ազդեցու-
թիւնը Կովկասի մէջ ալ ինչ աս-
տիճան ըլլալը հասկցուեցաւ այլ-
եւս: Հայաթաթար կռիւներու
մէջ 3 կուսակցականի հետ 103
ոչ—կուսակցական հայ կտրիճներ
կամ մարտիկներ երեւցած են
ասպարէզին վրայ, հակառակ ի-
րենց ինքնագովական ուժբաւ-
նելուն և ցուցադրումներուն:

Մենք արդէն գիտնալով Տաճ-
կաստանի և արտասահմանի մէջ

այդ երկու կուսակցութեանց ու-
նեցած ուժերուն խղճալութիւ-
նը, անգամ մըն ալ կու-
գանք ու կը հասնինք այն համոզ-
ման թէ հայ ազգը իր գոյու-
թիւնը պահպանելու և իր իրա-
ւունքները պաշտպանելու կարող
կազմակերպեալ ուժ մը չը ներկա-
յացներ, մինչդեռ ատոր ան-
խուսափելի և անհրաժեշտ պէտքը
ունի այսօր ամեն ժամանակէ ա-
ւելի:

Այս պէտքը, այս անհրաժեշ-
տութիւնը ձեռք բերելու եւ լը-
րացնելու համար անցեալ տարի
արտասահմանեան հայ մամուլ
մէկ մասին կողմէ քանիցս յեղ-
յեղուած Հայկական Համաժողովի
մը գումարման կարիքը այսօր
անյետաձգելիօրէն կը զգացուի:
Այս տեսակ համաժողովի մը նա-
խաձեռնութիւնը Վեհ. Կաթողի-
կոսէն ըլլալուն քօղակարտեալ
էինք: Անհամբար ենք իմանա-
լու թէ այս մասին կովկասահայ
ինչ եղբակացութեան պիտի գան:

ՊԵՏԻ Ե ՊԱՐԶԵԼ ԹԷ

ԻՆՉ ԵՆԲ ՈՒԶԻՄ

Ոչ մի բան այնքան կարեւոր չէ
այժմ, որքան պարզ ու որոշ հաշիւ
տալ մեզ, թէ «ինչ ենք ուզում
մենք»: Ուստի «Նոր-Դար» այդ ա-
ռաջնորդողը (նոմէր 42) շատ ժամա-
նակին է երեւան գալիս եւ դեռ
ժամանակից էլ մի քիչ ուշ:

Պէտք է վերապէս պարզ լինի մեզ
համար մեր «ազգային քաղաքակա-
նութիւնը», որ պէտք է ըզլի մեր
գարբի պատմութիւնից. մեր այժմեան
ընդհանուր ազգային դրութիւնից:
Ամեն ազգի մէջ եւս մտքերի տար-
բեր հոսանքներ կը լինին եւ կան,
բայց պէտք է այդ հոսանքները որոշ
լինին եւ ոչ քառասուն խառն դրու-
թեան մէջ:

Դիտենք՝ կայ մեզում «Դաշնակ
ցական» կուսակցութիւն, կան եւ
«Հնչակեաններ», որոնց մէկին կամ
միւսին յարգում են մեր ժողովրդից
որոշ տարբեր. բայց այն կողմը կայ եւ
ազգի ստուար մեծամասնութիւնը,
հասկացող եւ գործի մարդոց մի ըստ-
ուար բազմութիւն, որ ոչ հնչակեան
անունն է ուզում կրել եւ ոչ դաշ-

նակցական:

«Անունը կրել» ենք ասում, որով-
հետեւ, եթէ այդ կուսակցութիւննե-
րի պարագլուխներին պարզ ու որոշ
յայտնի է, թէ ինչի վրայ է հիմնուած
իրենց կուսակցութիւնը եւ ինչի են
գիտում իրենք. ներքեւում, ժողովրդի
մէջ մի քառասուն դրութիւն է իշ-
խում միայն եւ լոկ անուր կայ:

Մարդիկ բաժանուած երեք խմբե-
րի՝ դաշնակցական, հնչակեան, եւ ա-
պա մի երրորդ տարր, ժողովրդի
ու հասկացողներ ընծաւանութիւն
որ հետո է այդ կուսակցութիւննե-
րից, Հնչակեան ու դաշնակցական ի-
րար վերաբերմամբ յաճախ ու շատ
յաճախ կողուող ու կարծես թշնամի
ոյժեր են. իսկ երրորդ տարրն այդ
կուսակցութիւնների այս կամ այն
գործին երբեմն իւր համակրութիւնը
ցոյց տալով հանդերձ իւր մէջ ունի
եւ սնուցանում է մի խուլ գծողու-
թիւն այդ կուսակցութիւնների դէմ,
եւ այդ գծողութիւնը գնալով մե-
ծանում է:

Այսպէս է մեր հոսանքների դրու-
թիւնը մեզ ծանօթ տեղերում: Այս-
պէս պիտի լինի, կարծում ենք, եւ
ուրիշ կողմերում:

Ի՞նչ են ցանկանում եւ ինչի են դի-
մում մեր այդ երեք հոսանքները,
եւ արդեօք պարզ ու որոշ ծրա-
գրութեամբ է նրանց քաղաքական «հա-
ւատամբը» թէ՞ միայն անուշով դո-
յութիւն ունին:

Երրորդ տարրն անշուշտ դեռ չի կա-
րող ունենալ իւր ծրագրերը, քանի որ
դեռ նոր պիտի կազմակերպուի իր-
րեւ միացեալ ոյժ: Բայց հնչակեան-
ներն ու դաշնակցականները պէտք
է որ ունենան իրենց որոշ քաղա-
քականութիւնը, քանի որ նրանք ար-
դէն կազմակերպութեամբ մարմններ են
հանդիսանում:

Հաւատում ենք, ինչպէս ասացինք,
որ այդ կուսակցութիւնների գլուխ-
ներին պարզ կը լինի իրենց ծրա-
գիրն ու ձգտումը, բայց ներքեւում
ամենայն ինչ խառն է, հոսանքներն
իրարից անբաժան. մարդիկ մէկ կամ
միւս խմբին պատկանում են ատանց
իմանալու, թէ ինչ են ցանկանում եւ
ի՞նչու այս են ցանկանում եւ ոչ այն:

Հարցրէք ում կուզէք, եւ մենք շատ
անգամ ենք այդ հարցը շատերին տը-
ւել, թէ ինչով են տարբերուում հնչ-
ակեան եւ դաշնակցական կուսակ-
ցութիւններն իրարից, ինչի է ձգտում
նրանցից իւրաքանչիւրը: Խոստովա-
նում ենք, որ զժողովրդար ոչ ոք
դեռ չի կարողացել պարզել մեզ հա-
մար այդ դժուար հանելուկը: Եթէ
մեզ համար այդպէս է, որքան աւե-

լի մուր և անորոշ պիտի լինի այդ միջոցի առիթը անհասկացողները ու գիշերայինները համար, որոնք նոյնպէս մասամբ պատկանում են այդ կուսակցութիւններին։ Անշուշտ մինչեւ այժմ զօրութեամբ իրենք կային այդ կուսակցութիւնները համար իրենց «հաւատարմը» հրապարակով պարզելուն։ Բայց այժմ, երբ հնարաւորութիւն կայ, պէտք է, կարծում ենք, այլ եւս թողնել այդ քառասուն գրութիւնը։ Պարտաւոր են այդ կուսակցութիւնները հայ հասարակութեան եւ նոյն իսկ հայ ժողովրդին առաջ, քանի որ ժողովուրդը եւս մասնակցում է, բաց անել իրենց ծրագիրը, իրենց քաղաքականութիւնը մէջ դնել թերթի մէջ եւ թէ զէպի Ռուսիան, իրենց բռնած բռնելիք ընթացքը թէ զէպի մեր գրացի ժողովուրդները եւ թէ զէպի մեր հայ ազգի կեանքի էական խնդիրները։ Մեզ ասում են, թէ Հնչակեան կուսակցութիւնը սոցիալ-դեմոկրատական է, աւելի միջազգային ձգտումներով եւ հնչակեանները հենց միացել են ուրիշ սոցիալ-դեմոկրատականներին։ Դա մի հայ կուսակցութիւն չէ այլ եւս, որ նպատակ ունի քաղաքական հայ ազգի կեանքի մէջ իրենց գործընդունելու։ Մենք չը գիտենք այդ, այլ միայն լսում ենք, եւ լսածն ալ որոշ չէ մեզ համար։

Միւս կողմից մեզ ասում են, թէ «Դաշնակցութիւնը» բուն ազգային կուսակցութիւն է, բացառապէս ազգային նպատակներով եւ հենց դրանով է տարբերւում Հնչակեան կուսակցութեանը։ Մենք այս եւս հաստատ չը գիտենք, այլ միայն լսում ենք, չգիտենք մանաւանդ, որ կարելու է, թէ ինչպիսի հայ ազգային կուսակցութիւն է Բայց այդ հարկաւոր է վերջապէս իմանալ, հարկաւոր է վերջապէս, որ ամէն մարդ ով կեանքով հետաքրքրւում է, անտարբեր նայողի դեր չը կատարի, այլ յարի այս կամ այն կուսակցութիւններին, եթէ այդ կուսակցութիւններն իւր հայեցակէտերին բաւականութիւն են տալիս, իսկ եթէ չէ՝ մի նոր կուսակցութիւն ստեղծուի։

Բայց արեւ, ուրեմն, պ. պ. դաշնակցականներ եւ հնչակեաններ ձեր ծրագիրները, պարզեցէ՛ք մեզ, թէ ինչի էք դիմում եւ ինչպէս։ Մենք հաւատացած ենք, որ ձեր ձգտումները բարի եւ ազնիւ դատումները են ըղիւսով, բայց եւ մենք պէտք է համոզվենք, որ ձեր ձգտումներն անհրաժեշտութիւն են մեր այժմեան վիճակի համար, որ ձեր միջոցները համապատասխան են մեր պատմական եւ աշխարհագրական դրութեանը։ Մի արհամարհէ՛ք մեր այս պահանջը, որ միայն մերը չէ, այլ եւ, կարծում ենք, հայ հակացողների մեծամասնութեանը։ Մի արհամարհէ՛ք միայն այն պատճառով, որ ժամանակը չէ այլ եւս, որ ոյժերն անգործունեայ մնան։

Ժամանակ է վերջապէս, որ յայտնի լինի հայ հասարակութեանը, թէ ինչ եւ ուղղում իւր կուսակցութիւնները։

Ժամանակ է վերջապէս, որ քննադատութեան առնուեն նրանց ծրագիրները, եւ նրանց հետեւողները գիտակցութիւն վերաբերուեն զէպի իրենց սիրած գործը, եւ ոչ լոկ անուան համար իրար դէմ ու դէմ կանգնեն։

(մնացեալը յաջորդով)

Ի ՊԱՏԻՒ ԶԷՅՄՍ ՊՐԱՅՍԻ

Պ. Զէյմա Պրայս, անգլիական նոր գաղութներ անդամ ու Իրլանտայի նախարար ընտրուած ըլլալով, հրաժարած է ի նպատակ Հայաստանի, Կերէտէի ու Մակեդոնիայի գործող անգլիական մասնախումբին անդամակցութենէն։ Իր համակրողներէն Տեառք Ս. Կլաւտոն, Ֆ. Սդէվենսըն, Մընքսթէյլ, Գիլին, Պըքսթըն, հոգաբար պետ Ճոնս, Հէյթըր, երեք Մուքթըր, Շուան, Հէյնքը, երեք Ակար Պիդ ու քարտուղար Ադքին ուրոշած են փետր. 23 ին ժամը 7/2 ին

ի պատիւ իրեն շքեղ խնճոյք մը տալ Լոնտոնի Ուէսթմինսթըր Բալաս Հոթէլին մէջ։ Տիկին Պրայս խոստացած է ներկայ գտնուիլ եւ ծանօթ անձնաւորութեանց հրաւերը ընդունել եւ Եւրոպայէն մինչեւ Ամերիկա։ Բարիքն Տ. Չերաք հրաւերուած է հիւրամեծարի պաշտօնով։

Այս սովոր շոյն պահպանելու մէջ ժամը 2 ին համազգային գումարում մը տեղի պիտի ունենայ ի նպատակ Տաճկահայաստանի հարստահարուած ժողովուրդներուն, ծերակուտի անդամ Պ. Թոմպսոնէլ տը Գոնսթանի նախագահութեան տակ եւ մասնակցութեամբ անգլիացի, ֆրանսացի ու իտալացի հայաստէրներու։

Պ. Զէյմա Պրայս հայ դատին ցատագով հանգիստացած է 1876 էն ի վեր, երբ, Մասիսի վերելքը կատարելէ յետոյ, հրատարակեց իր «Թրանսկալկասիա էնտ Արարատ» անուն գիրքը։ Ինք եղած է Անգլիոյ մէջ հայասիրական շարժումին պարագլուխը, եւ 30 տարիէ ի վեր մեր ազգին ի նպատակ խօսած ու գրած է, առին անգամ որ կարեւոր առիթ մը ներկայացած է իսկ յեղափոխական յախուռն ձեռնարկներու հակառակ գտնուած է միշտ, եւ եթէ մեր վարիչները իրեն անսային, փոխանակ ռուս ոչնչականներու ու ֆրանսացի եւ ուրիշ անիշխաններու խորհուրդին հետեւելու, մեր ժողովուրդը այս ողբայր վիճակին հասած չպիտի ըլլար։ Կ'արժէ ուրեմն որ հայ գաղութները փետր. 23 ի խնճոյքին առթիւ շնորհակալութեան ուղերձներ եւ կամ հեռագիրներ ղրկեն մեծանուն հայաւէրին, որ զեռկրնայ մեր դատին օգտակար ըլլալ իբր անդամ ազատական նախարարութեան։ Ուղերձ կամ հեռագիր պէտք է ուղղել խնճոյքի քարտուղարին։

Mr Atkin 9, Northum berland Avenue Putney London Y. W.

Մեր Ամերիկայեան ազգայիններն ալ լաւ կընեն եթէ յանուն հայ գաղ-

թականութեան մետաքսէ արեւելեան գորգ մը նուիրեն Օր. Ռուզվելթին իր մօտակայ ամուսնութեան առթիւ։ Ասովթէ՛ Ամերիկայի հանրային կարծիքը սիրաշահած կըլլան, որ շատ նպատաւոր չէ միւր ցեղին, եւ եթէ իրենց երախտագրութիւնը յայտնած կըլլան հայաստէր նախագահին։ Սուլթանը քաջ գիտէ այսպիսի առիթներէ օգտուիլ, պէտք է որ մենք ալ մեր կարողութեան համեմատ գործենք, յիշելով ֆրանսական առածը թէ «Փոքրիկ նուէրները բարեկամութիւնը կենդանի կը պահեն»

Մ.

ԿՈՉ ԲԵՄԱՆՑԻՆԵՐՈՒ

Ո՛վ Հայրենակիցներ

Բաւական չեղա՞ւ մեր քաջած տառապանքը, չի վերջացա՞ւ մեր դատարկ յոյսը։ Ներկայ թուրք կառավարութեան քաղաքականութեան նպատակը մեր բնաջնջումն է։ Ուրեմն ի՞նչու կը լռենք, ի՞նչու մեր բողոքի ձայներ չմը բարձրացնենք։ Ամբողջ Բեմալիցին սկիզբէն ի վեր պահպանութեամբ իր օրապահիկը կը ճարէ, բայց այսօր մեր երթեւեկութիւնը բոլորովին արգիլելով թուրք կառավարութիւնը պարզապէս զմեզ արտասահմանի մէջ կը բանտարկէ։ Քանի որ չ'մը կարող երթալ մեր հայրենիքը, զուրկ մընացած ենք մեր գերդաստաններէն, մեր ընտանիքներէն եւ մեր Սիրիլիններէն, որոնք տասնեակ տարիներէ ի վեր օր ըստ օրէ կ'ապասեն անհամբեր մեր գաղտնեան։ Մեզմէ շատերն մեր խիտ թարմ հասակին մէջ ամուսնացած ըլլալով, թողուցած ենք անդ մեր ընտանիքները եւ մեր անգին երիտասարդութիւնը օտարութեան մէջ կ'անցունենք։ Նոյնպէս ամեն անոնք որ հայրենիքի բուռն փափաքէն մղուեալ մէկ անցագրի մը համար տասնապատիկ հատուցանելով յաջողած են ձեռք ձգիլ, բայց ընդհակառակը, թուր-

ՍՈՒԼԹԱՆԸ ՍՊԱՆՆԵԼՈՒ ՓՈՐՁԻՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

(Արտատպուած «ԱՐԵՒԵԼԻՔ» էն)

[Շար. նախորդ թիւէն]

ԸՆԴ. ԴԱՏԱՎԱՐՈՒՄ ԶԱՌԸ

Մկրտիչի քեռորդին Յովսէփ յայտարարեց թէ Մանուկի, մօրեղբորը՝ Մըկրտիչի եւ ամբաստանեալներէն Յովհաննէսի թեւադրութեամբ վերոյիշեալ «Իրօշակ»ի քօմիթէին մէջ մտած է. մանաւանդ Մանուկ իրենց շատ մը խռովարարական թեւադրութիւններ րարած է, որով յաճախելով Մանուկի սենեակը, զոր Մանուկ քօմիթէի վերաբերողներուն գումարման վայրը ըրած էր, «Իրօշակ» լրագիրը կարգացած եւ այդ կերպով տեղեկացած է քօմիթէին խռովարարական գազանի բաղձանքներուն եւ գործերուն։ Նաեւ թորգոմի եւ Սիւլիս Րիլի հետ մասնաւոր յարաբերութիւններ հաստատելով, անոնց վստահութիւնը զըրաւեր է, որով եղեռնական արարքէն քիչ ժամանակ առաջ Սիւլիս Րիլի պարկի մը մէջ գրուած իրեն յանձ-

ներ է տասընինգ հատ «մէմէլի» «պոմպա» եւ կարգ մը հայերէն տառեր. ատենք նախ իր մօրեղբորը հետ ըրեակած կրօնիէ աբարթըմանին դռնապանի սենեակին կիցը գտնուած արդուկի սորահին առկր պահեր են, յետոյ մօրեղբորը՝ Մկրտիչի ազգարարութեամբ վրայ գայնս անկէ առնելով Մանուկի տարեր է։ Վերգրեալ Յովհաննէսն ալ այս պարագաները մաստաք խոստովանելով ըսաւ թէ ինք ալ «Իրօշակ» քօմիթէին կը վերաբերի եւ Մանուկի խռովարարական յարկը յաճախած է։ Կրօնիէ արարթըմանին մէջ ատոր բնական սենեակը խռովարկուելով Մկրտիչի կողմէ անոր ուղղուած հայերէն նամակ մը գտնուեցաւ։ Նամակը թարգմանուելով պարունակութիւնը հասկցուեցաւ, աւինքն թէ Գեղորդին Յովսէփին կողմէ պատահմամբ տեսնուած ու կարգացուած նամակին պարունակութիւնը եթէ ուրիշ տեղ յայտնէ, բնաջնջ պիտի ըլլայ։ Այս պարագաները հարցուեցաւ Յովհաննէսի, որ ըրաւ թէ Յովսէփի երիտասարդ ըլլալուն համար անոր փափաքները բարեփոխելու նպատակով գրած էր. այդ կերպով Յովհաննէս ուզեց տարբեր մեկնութիւն մը տալ խնդրոյ։ Այդ նամակին նպատակին համար Յովսէփ հարցաքննուելով ըսաւ թէ Մը-

կրտիչի խռովարարական օպատակներուն բերմամբ Մանուկի միջոցաւ ծըննդավայրէն բերուելու ձեռնարկուած պահուն, այդ մասին Մկրտիչի գրած նամակը կարգով մը Յովսէփի ձեռքը անցնել է եւ պարունակութեան տեղեկացեր է, որով այդ կէտը ուրիշ անգ մը շքեղաւ նպատակով օպատանալիք եղած է։ Ատկէ վերջը վերոյիշեալ Յովսէփ ալ համոզուելով, նոյն թուականէն սկսեալ քօմիթէին մէջ ընդունուել է եւ անոր շատ մը խռովարարական կարեւոր ծառայութիւններ ընել տուեր են։

Ամբաստանեալ Երուանդ Բօնանեան խոստովանած է թէ կը ճանչնայ Սիւլիս Րիլին, այսինքն Վահան եւ թորգոմի ու Աշոտը, կարգացած է «Իրօշակ» լրագիրը այսպէս հասու ըլլալով խռովարարական նպատակներու, նաեւ թէ Մանուկի հետ գացած է խռովարարական բաներու եւ ներկայ գործողութիւնը վրայ տեղեկութիւններ անելու համար։ Նպատակ ձեռք քօմիթէին տրուելու համար Մանուկի յանձնած գումարի մասին նախապէս ըրած խոստովանութիւնը փոխելով ըսած է թէ փոխ տուած է Մանուկի Սակայն, թորգոմին ու Վահանին կողմէ իրենց քօմիթէին մէջ մտցուած եւ հրահրութ պահող կարեւոր անձերէն ըլլալը հաստատուած է։

Իր երկրէն կանչուած եւ Գրէօքըր օթէլի սպասաւորներէն Պիթլիսցի Ֆրօ Պողոտեան մասնակցած է Հայոց նախկին զէպերն եւս, ու այս առթիւ տասը տարի շղթայակիր աշխատութեան դատապարտուած է ու յետոյ կայս. ներման արժանացած է։ Սակայն թորգոմի եւ իսպուհէճի Նչանի առաջնորդութեամբ, «Իրօշակ» քօմիթէին մէջ մտած է։ Այդ միջոցին թորգոմի կողմէ իսպուհէճի Նըշանի տրուած տասնհրկու հատ «պոմպա» եւ հրահրութ պարունակող մեծ ծրար մը Նչանի հետ պահած է Գրէօքըր օթէլի նկարին մէջ, սանդուխին տակ։ Յետոյ թորգոմի կողմէ պահանջուելով հրահրութ պարունակող նիւթերը անոր վերադարձուած են։ Իսկ «պոմպան» երբ, հոն մնացած ըլլալով, եղեռնական արարքէն երեք ամիս առաջ, թորգոմի աղաքարութեան վրայ, այդ «պոմպան» երբեք նկուղէն հանուելուն ձեռնարկուած է, սակայն օթէլին արթոյ կողմէ սանդուխին վրայ շատ մը շիշեր դրուած ըլլալուն համար անկարելի եղած է այդ ձեռնարկը։ Ամբաստանեալները խոստովանած է այս իրողութիւնները։

(Շարունակելի)

քերոյ մի նաւահանգիստը հասնելով վար դրուած են եւ հազարաւոր քրն-նութիւններէ յետոյ մի ջնչին պատ-ճառաւ ամիսներով բանտարկուած եւ ամբողջ ունեցածէն զրկուած եւ վեր-ջըն ալ այս եւ այն կողմերը աքսոր զրկուած են :

Ուրեմն ո՛վ հայրենակիցներ, այս ամ-բողջը բաւական չե՞ն մեզ համար . որ կրկին չ'եմք խորհիր մեզ ոգտակա-բը, որովհետեւ քանի որ մենք չու-նիմք թուրք հողի վրայ ոտք դնե-լու իրաւունքը ապա նոքա ինչպէ՞ս ունին մեզ համար մեր տուններէն ձը-րիաբար տուրք հաւաքելու իրաւունքը, որ է զինուորական «պէտէլը-աքէ-րէն» եւ ուրիշ տուրքեր :

Ուստի կը խնդրուի յարգոյ հայրե-նասէր ազգայիններէ որ բարեհաճին միանալ սոյն կոչի եւ միմեանց հեա բանակցել եւ ստորագրութիւններ հա-ւաքելով, բողոքել Բէմախի կառա-վարութեան, որ կամ մեր երթեւե-կութեան մի աւտոմոթիւն հրատա-քակեն եւ կամ բոլոր արտասահմա-նի հայրենակիցներու տուրքերը յետա-ձգեն : Եթէ ոչ գիտիմք ուրիշ միջոցի :

Ա. ԶՈՐԵՊԱՆՍԱՆ

ԲՕՆՍԹԱՆՑԱՅԻ ԱՂԲԱՍԱՍԻՐԱՅԸ

Տէր Խմբագիր

Անցեալ փետրվարին քաղաքիս մէջ «Աղբատասիրաց» ընկերութիւն . մը հաստատուեցաւ, կարօտ ազգայնոց օգ-նելու նպատակով : Հիմնական կանո-նադրի համեմատ՝ գործ. ժողովը իր միամեայ հաշիւը ու հրաժարականը մատոյց այսօր գումարուած ընդհա-նուր ժողովոյ :

Սոյն հաշուեկէտի մի օրինակը ներ-փակ ձեզ կը յղեմք . խնդրելով որ «Իրաւունք» ազգագուտ լրագրի մօտա-կայ թիւերէն միոյն մէջ հրատարակե-լու բարեհաճութիւնն ունենաք :

Հաճեցէք ընդունիլ, Տէր Խմբագիր մեր անկեղծ շնորհակալութիւնը, ինչպէս նաեւ յարգանքոց հաւաստին :

Ի Դիմաց Գործ. Ժող. Աղբ. Ընկ. Գաւազակտ Ատենադպիր Ատենապետ Պ. Գրիգոր Գ. Յակոբեան Ա. Նուհոսեան

Հ Ա Շ Ո Ի Ե Կ Շ Ի Ո

«ԱՂԲԱՍԱՍԻՐԱՅ» ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԲՕՆՍԹԱՆՑԱՅԻ ՀԱՅՈՑ

1905 Փետ. 7 էն, մինչ 1905 Յունվ. 15

ՄՈՒՏՔ

	Ֆր. սնդ.
Անդամոց ամսավճարներէ	1039. 50
Ջատկի, Մոնունդի առթիւ եկեղեցւոյ պնակէն	121. 20
Հայ սրճարաններու մէջ դրուած գանձանակներէ	208. 85
«Վէսէլ» խմբին միջոցաւ տրուած ներկայացումէ մը, զուտ հասոյթ	337.
Չանազան	50
	1756. 55

ԵԼՔ

	Ֆր. սնդ.
Կարօտէրու տրուած նպաստ	593. 70
« Ճանապարհածախս »	349.
Հիւանդներու նպաստ	207. 80
Անտէր ժողովի թաղման ծախս	175. 25

Աղբատ. աշակերտաց հագուստ	120
Չանազան ծախս	46. 10
Պատրաստ դրամ	264. 70
	1756. 55
Բոնսթանցա 14 յունվար 1906	

Ի Տ Ր Ա Կ Ա Ն Ո Ք Ի Ն

ՇՈՒՄԼԱ 23 յունվար

Տէր Խմբագիր,

Ստորագրեալս կը խնդրեմ ի սէր ազգութեան և ի սէր ճշմար-տութեան, հաճիք փոքր անկիւն մը շնորհել ձեր ազգագուտ թեր-թիւն մէջ իմ որոշ ստորագրու-թեամբ և կանխաւ ընդունել իմ անկեղծ յարգանքներս :

Ներկայ ամսոյս 22 ին, կիրակի գիշեր Շումլայի աղբ. վարժարանի սրահին մէջ լսարան-հանդէս մը սարքուած էր, տիկնանց «ՆԱԲԷ» ընթերցարանի տարեգարձին առ-թիւ, և ամբողջ Շումլայի հայու-թեան համահրաւիրագրեր բազ-ցուած էին : Մենք իբրեւ հայ եւ միշտ քաջալերիչ ազգագուտ ձեռ-նարկներու մեր կարողութեան նե-րած չափով ուղղեցինք մեր քայ-լերը դէպի վարժարան մի քանի ընկերներով, ու սկստու հանդէսը : Բաւական յաջող էին փոքրիկ օ-րիւրդները իրենց ոտանաւորնե-րուն արտասանութեան մէջ. և եր-գեցիկ խումբը պարապ չը ձգե-լու համար բեմը կէտգէ, բայց մեծ զարմանքով լսեցինք երգ մը ո-րուն եղանակը շատ լաւ ըլլալուն համար միմիայն եղանակը առած էին և երգին մէջ «Հիշակեան» բառը գտնուելուն համար ուրիշ բառեր չարագրած սկսան երգել : շատ անգամներ լսած էինք այդ «Հեռաւոր երկիր» երգը, բայց մէ-ջը այդ տեսակ բառեր ամենեւին : Հիմա կը հարցնեմ «ՆԱԲԷ» ընթեր-ցարանի արգոյ վարչութեան որ այն Հիշակեան հերոսները ո-րոնք հայ ազգին համար նա-հատակուեցան գնչուներ էին :

Կապասեմ Ա. Եսաղաձեան

Շումլայէ խմբագրութեանս ուղղո-ւած ուրիշ նամակ մը շատ գովեստով կը խօսի տեղւոյն մէջ տարիէ մը ի վեր կազմուած «Արարատ» անուն թատե-րասիրաց ընկերութեան մասին : Այս ընկերութիւնը կազմող երիտասարդնե-րը զերծ կուտակցական նեղ նկա-տումներէ, մանաւանդ Գրոշակեաննե-րու յատուկ ֆանատիկութենէ, ներ-կայացումներ կուտան միշտ ի նպաստ վարժարանի, աղքատի, հայ արկած-եալներու եւ այլն, միշտ անխտրական ողբով եւ զուտ բարեգործական ու ազգասիրական նպատակներով :

Վերջին անգամ Ս. Միսնգեան բ օրը թատերասիրաց նոյն խումբը տեղւոյն երկսեռ վարժարանաց ի նպաստ «Վաս-պուրականի հերոսները» ներկայացնե-լով, աշակցութեամբ Պատ. Հոգաբար-

ձութեան յաջողած է թէ կողիկ հա սոյթ մը ձեռք բերել եւ թէ ամբողջ աթոռները գրաւող հանդիսականները գոհ թողուլ :

Կը գնահատենք «Արարատ խումբի» անդամոց եռանդը եւ անխտրական ոգին ու կը բարեմաղթենք որ յա-ւէտ զերծ մնայ կուտակցամոլներու թունաւորումներէն :

ԱԶԳԱՅԻՆ

Հինգշաբթի գիշեր «Վէսէլ» խումբին կողմէ թատերական ներկայացում մը տեղի ունեցաւ ի նպաստ տեղւոյս Աղբատարան-մին, երկու բառով բացատրած ըլլալու համար պէտք է ըսել թէ ոչ հասոյթը գոհացուցիչ էր և ոչ խաղը :

—Պալլըգէ մեզ կը տեղեկացը-նեն թէ տեղւոյն փոքրիկ հայ գաղութին նորահաստատ վար-ժարանի Հոգաբարձութիւնը իր հաշիւները ներկայացնելով, հը-րաժարած է. ուստի գաղութը ընդհ. ժողով գումարելով հինգ անգամներէ բաղկացեալ նոր հո-գաբարձութիւն մը ընտրած է : Պալլըգի ազգայինք քանի մը տարիներէ ի վեր կը խորհին հոգեւոր միութարութեան զուրկ չմնալու համար մատուա մը եւ քահանայ մը ունենալ :

—Անցեալ ամսի Տօլրիչի մէջ պաշտօնավարող Տէր Յակոբ քա-հանան Պատրիարքարանի հրա-մանաւ Ռումանիա մեկնեցաւ, թրք.—Օգնա քաղաքին մէջ քա-հանայագործելու պաշտօնով :

ԱՅԼ ԵՐ ԱՅԼՔ

Տանիմարքայի Գրիսթիան Թ. Թա-գուորը որ քանի մը եւրոպական նահանգներու դքսութեան տիտղոս-ներ ալ ունէր, մեծաւ ամսոյս 29 ին(Ը.Ե.) Գորենհակի մէջ : Հանգուցեալը 1818 ապրիլ 8 ին ծնած էր, եւ կը թագաւո-րէր 1863 էն ի վեր : Իր իշխանու-թեան տարութիւն առթից Բրուսիայ եւ Աւստրիոյ հետ ունեցած զփաղդ պատերազմը որով Տանիմարքայէն խլուեցան Սէյսվիկի, Հոյսթէյնի եւ Լօէնպուրկի դքսութիւնները, եւ Ալ-սէն ու Ֆէյհման կղզիները : Իսկ Գը-րիսթիան Թ. ի յաջողութիւնն եղաւ Եւրոպայի բոլոր արքունիքներուն մէջ իր ընտանիքի անդամներուն մուտքը-ինք Յունաստանի եւ Նորվեգիոյ թա-գաւորներուն հայրն է. Անգլիոյ թագա-ւորին աները, Ռուսիոյ Նիքոլայ Բ. Չարին մեծ հայրն է եւ այլն :

Ճարոնի պատերազմական նոխարա-րը հրատարակութեան տուաւ ցուցակը ռուս. ճարոն պատերազմի տեւողու-թեան միջոցին մեռելու եւ վիրաւոր-եալ ճարոնցիներուն : Պատերազմի դաշտին վրայ մեռած-ներ 43,219 « Վիրաւորուածներ 153,673 պակասածներ (անյայտացած) 5,031

Արկածի հետեւանքով վիրաւորուած	16,459
Հիւանդութեամբ մեռած եւ անկարողութեան մատ-նուածներ	221,136
	439,563

Բայց թշնամիին սուրովը կամ գնդակովը սպաննուածներու ամբողջը միայն 60,000ի չափ է, որովհետեւ վիրաւորեալներու մէկ փոքր մասը միայն մեռած է, միւսները ապաքի-նած են եւ կամ խեղանդամ բայց ողջ մնացած :

«ԻՐԱՒՈՒՆՔ» Ի պատասխանները

ՍՕՅԻՍ. Շանք— Կայծակի գրածը փոխանակ հերքելու, դուք եւս կը հաստատէք թէ ժողովուրդէն որոշ գումարներ պահանջած էք Դաշնակ-ցականները. այն տարբեր խնդիր է թէ տուողներ ու չը տուողներ : Դաշնակցութիւն-նը իր ուժի եւ բարոյականի գեթակը-ռութեամբ ժողովուրդէն ամենայար-գուած կուտակցութիւն մը ըլլալուն. այդ ձեռք երէկուան պետին Վարդօրն հարցուցէք : Իսկ Կայծակի ուղղած հայոյութիւնները «Իրաւունք»ի մէջ չեն սղմիր :

Կովկասահայոց նպաստ հասցնել այս միջոցիս ամէն հայու համար նուի-րական պարտականութիւն է. բայց զրկուածը ճիշդ իր նպատակին ծա-ռայեցնելու համար ամեն կասկածէ վեր վստահելի ձեռքերու պէտք է յանձնել. դուք գաշնակցականները կրնաք ձեր կօմիտէն կամ պիւռօն վստահելի նկատել, բայց ուրիշներ կրնան կասկածել ձերիններէն եւ կու-զեն ուրիշ ապահով միջոցաւ իրենց նպաստը զրկել :

Մենք ամենապահով միջոցը կը նը-կատենք Վեհ. Կաթողիկոսի հովանա-ւորութեան ներքեւ գտնուող Թիֆ-լիսի յանձնաժողովը որուն պաշտօ-նապէս ցոյց տրուած հասցէն է՝

Պ. Ալեխանձր Միլի-Ազա եանց Թիֆլիս (Կովկաս-Ռուսիա)

ԲՈՎԻՏԷՆՍ Մ. Տ. Պօղոս.— Ժո-մանակին ստացած ենք 7/2 տողարը շնորհակալութիւն :

ՆՈՐ-ԴԱՐ

Օրաթերթ Գաղաքական. գրական

Բաժնեգիրը արտասահմանի համար տարեկան 40 ֆր. վեցամսեայ 25 ֆր. : Հասցէ՝ Խմբագրութիւն «ՆՈՐ-ԴԱՐ» (Կովկաս) Թիֆլիս

ՄՇԱԿ

Օրաթերթ քաղաքական, գրական

Բաժնեգիր՝ Եւրոպայի համար 30 ֆր. Ամերիկայի համար 6 տողար, Պարսկաս-տանի եւ Ռուսաստանի համար 10 րո. պ-լի տարեկան : Հասցէ՝ Խմբագրութիւն «ՄՇԱԿ» (Կովկաս) Թիֆլիս

ԱՐՇԱԼՈՅՍ

Գրական, հասարակական, քաղաքական

Օրաթերթ

Բաժնորդագիրն օտար երկրներ՝ 35 ֆր. Հասցէ՝ Խմբագրութիւն «ԱՐՇԱԼՈՅՍ» (Կովկաս) Թիֆլիս

Շ Ն Ո Ր Հ Ա Կ Ա Լ Ի Ք

Ամենասերելի եւ վաղամեծիկ զաւակիս Ժորայրի մահուան ամթիւ, անոր յուզարկաւորութեան ներկայ գտնուող եւ նամակով, քաղթով ու հեռագրաւ ցաւակցութիւն յայտնող ծանօթներուս եւ բարեկամներուս կը յայտնեմ խորին շնորհակալիքս :

ՀԱՄԱՐԱՐՁՈՒՄ ԳՐԻԳՈՐԵԱՆ

1906 ՌԵՍԻՆԵՔ 25 Յունվար

ՀԱՎԱՏԻՍԱԹ

Թ Ի Ի Ր Ք Ի Ա

Սթանպօլտան ֆիկառոյապիւտիւրիւտիկինէ պինանէն, ԱճէմՇահընը՝ պիր նէվ Սահմանդըրու թիւն եանի մէճլիսի մէպուսան իլան իթմէսի Սուլթան Համիտէ ֆէնա թէսսիր իթմիշ տիր, Թիւրքիանըն ճիվարընտո պուլլընան Բուսիա, Գարատաղ վէ Աճէմիստան հիւքիւմէթլէրի շուսոն պիր գաչ այ զարֆընտա հաքիմիյէթի մութլագատէն վաղ կէշուպտէ, իտարէի հիւքիւմէթի էհալինին մէպուսլարընա թէրք իթմէլէրի բէք մուհիմ վագաալար օլուպ, եագընտա Սուլթանըն տախի հաքիմիյէթի մութլագաւընըն թէպտիլ ու թագրիր օլաճաղընը իմա իտէր :

Աճէմ Շահը վէ գարատաղ բըրէնսի քէնտի հիւսնի ըրգալարը իլէ էհալինին հագգընը իտտէ իթտիլէր : Ձար իսթիլալ թէէսիրի իլէ թէնէզլիլ պույուրտը, Սուլթան Համիտ նէ՝ թարիգլէ Գանունը էսասինին իճրասընա մէճպուր իտիլէճէք տիր :

—Պապը Ալի Պուլկար հիւքիւմէթինէ պիր նոթա վէրուպ, կէճմիւրկ թարիֆէսինի թանգիմ իթմէք իչիւն 20 կիւնէ գատար պիր գամիսիւն թէշքիլինի թէքլիֆ իթտի, լվէ աքսի հալտէ՝ Պուլկարիտան թիւրքիայա կիտէճէք մալլէրէ ումուսի կէճմիւրք թարիֆէսի մուճէպինճէ մուամէլէ իտիլէճէկինի պիւտիրտի :

Պուլկարիա ահտնամէլէր վէ թարիֆէլէր մուճիպ հարէքթ իթմէկէ հէր տայիմ հաղըր օլտըղընտան, Պապը Ալիինին պուլթէքլիֆինի հէր հալտէ գապուլ իտէճէք տիր :

—Կէշէնլէրտէ Նուրի պէլին իքի գըղարը էվրոքայա գաչտըլար ըտը : Պու տէֆա Սթանպօլտան էնտէքսուսուս Բոշսէնէ պիւտիրիւտիկինէ պինանէն, Բըտվան բաշանըն գըղը Պուրսայա գաչուպ պիր գոճա իլէ ալտէթ իթմիշ օլմագտան մաատա վէ տահա թիւհաֆը շու տըր քի՝ տախիլիյէ նաղըրը Մէմտուհ բաշանըն պիր գըղը վէ տիկէր նաղըր թուրիսան բաշանըն պիր

գըղը էվրոքայա գաչմըլար :

Այ չոգ թալիմ թէրպիյէ կէօրմիւշ աւըղատէ թիւրք գըղարըն իչպու գաչմագ մօտասը միւթէասուպ իսլամարա ֆէնա թէէսիր իտէյօր : Պու ուլլընաղըղըն էօնիւնիւ ալմագ իչիւն Եըլտըղտա թէտպիրլէր տիւշիւնիլիյօր, եանի պուստան սօնրա հարէմ տահ իրէլէրինտէ հօճա, եախօտ միւտէրրիտէ սըֆաթը իլէ էվրոքալը գըղ վէ գատըն գապուլ իթմէմէք, քէզա եէրլի խրիսթիան ֆամիլիալարը իլէ իսլամ գատընլարըն իւնսիյէթինի մէնն իթմէք վէ պուսլարըն կէօղլէրինի աչաճագ օլան րօմանլար էվլէրէ սօգմամագ : Պագաթ պուլ թէտպիրլէր տախի նէմէրէսիլ գալաճագ տըր : զիրա պիր գաչսէնէ մուգատտէմ աչնը էմիրլէր իրատէ օլընտը, վէ աղ կիւն գարֆընտա թէքրար հէրքէս իսթէտիկի կիպի հարէքթ իթմէկէ պաշալտը ըտը :

—Կէշէն կիւն Սթանպօլտա տէրտէսթ օլընան աճէմ թագաալը Շիւրպի նամ շախտըն սէրպէսթ պըրագըլմասը իչիւն Աճէմ էլլիսի իտտաա իտէյօր : Պագաթ նէճիպ Սէլհամէ բաշա անը աշարշիսթ կէօսթէրմէկէ չալըշիյօր պու իթթիւրայա՝ Շիրագլինին էրմէնի օլմասը վէ բալթօսընտա պիր գաչուֆագ ճէպլէր պուլլընտըղը տէլիլ ատտ իտէյօր : Մէլ համէնին ասըլ մագսէտի Սուլթանը գօրգու իչիւնտէ թուլթուպտէ քէնտի իսթիֆատէսինէ պագմագտան իպարէթ տիր, Շիրագլի թահգիլ իթմէք սէպէպի իլէ պիր թագըմ էրմէնիլէր տախի իսթիւրթագ ալթընա ալընտըլար, Ժօրիս եէնիտէն Եըլտըղտա իսթիւրթագ օլընիյօր :

—Սթրումիցա գաղատընտա 8 պուլկարլար գաթլ օլընմըլար : ճանիլէր գաչմըլ օնլար եարոււմ եախօտ թիւրք օլաճագլար : գտյմագամըն թահգիլգաթը սէմէրիլ գալմըլ տըր :

—Եէմէնտէ միւշիլ Ֆէյլի բաշանըն 25,000 քիշիլիք օրտուսընտան 10,000 քիշի գալմըլ վէ Սանաատա մուհասէրէտէ պուլլընուպ, իմտատ վէ մուհիմմաթ պէքլէմէքտէ տիր : Ասքէր վէ մուհիմմաթ նագլի իչիւն մէվճուտ բարա վէ վարօր օլմատըղընտան, անճագ 2000 քիշիլիլմիտէն Խօլա չըգաճագ տըր :

Ր Ո Ւ Ս Ի Ա

Շէտիտ թէտպիրլէր վասիթասը իլէ Սիպէրիա չըմէնտըֆէրին իչի թաթիլ իտէն մէմուրլարըն էքսէրիսի իթաթիւ կէլմիշ վէ տիկէրլէրի աղ ու թարտ օլընմըլ վէ սիւքիւնէթ հիւքմ իթմէկէ պաշալմըլ օլտըղը վէ իչի

գամիթէսինին թուլթուլտըղը ժաքատան պա թէլէկրաֆ պիլտիրիլիյօր :

—Բէթերսպուրկտան պիլտիրիւտիկի իւզրէ, էհալի թէքրար գաաալարա վէ էմիլիյէթ սանտըղլարընա բարա գօյմայա պաշալմըլ տըր :

Բէթերսպուրկ 6 փետր :

Տոււանըն ինթիսապլարը ապրիլ 7 տէ իճրա օլաճաղը վէ Տոււանըն իլք մէճլիսի ապրիլ 28 տէ իճթիմա իտէճէկի մուգարբէր վէ ճիտտի ատտ օլընըյօր :

—Բէթերսպուրկ Գարանմըլ օլան 48 մաթպաալար աշըլտըլար : Տախիլիէ նաղըրը մաթպաաճրլարա բէճա իթտիկի քի՝ պէօյիւկ զաթլարը իսթիհա իտէն գարիգաթիւլէր(սուրէթ)պաամասնլար

ԱԻՍՏՐԻԱ ՎԷ ՍԵՐՊԻԱ

Պէլկրատ—Աւստրօ-Հունգարիա էլլիսի պիր նոթա իլէ՝ Աւստրիա տան Սերպիայա իտիսալ օլընան մալլէրէ միւշքիւլաթ վէրիւտիկին տէն տօլայը բութէսթ իթտի վէ օլմիւշքիւլաթըն տէր հալ լաղվընը թալէպ էյլէտի :

Սըրպ հիւքիւմէթի Աւստրիայա գարշը եէնի նիւմայիլէրտէն սագընիյօր, Պուլկարիտան պուլկար թիւճարլարըն Պէլկրատա վիզիթա վէրմէլէրինին թէէլիսի օլընմասընը Սըրպ հիւքիւմէթի բէճա իթտի : Պուլկարիանըն թուլթաճաղը թարիգէ բէսմի տաիլէրտէ էմիլիյէթ իտիլմէյօր, Աւստրիա իլէՍերպիա կէճմիւրկ մուհարէպէսինէ թուլթուշաճագ օլուր իսէ, Պուլկարիա Սերպիայա գուլվէթ մի վէրէճէք, Խօքսա եալընըլ քէնտի իսթիֆատէսինէ մի պագաճագ տէյիւ չիւրէն իտիլիյօր :

Գ Ա Ր Ա Տ Ա Ղ

Գարատաղ վէ իթալիա պէյնինտէ իթթիֆագ թէշքիլինէ տայիլ չըգան շայէաթ Բօմատան թէքլիպ օլընիյօր : Պագաթ Գարատաղըն պաղը գալէլէր եաբմասընա վէ եէնի սիւհալար սըբարիշ վէրմէսինէ պագարագ, մէշքիւր իթթիֆագըն ոահիհ օլտըղընը իտտաա իտէնլէր վարտըր :

—Բրէնս Տանիլ Լօնտրատա քիւլիյէթլի մուհիմմաթը հարպիյէ վէ պախուսուս եէնի միթրայէօղլէր սըբարիշ վէրմիշ տիր իչպու սըբարիշլէր իճրա օլընմասընտա Գարատաղ օրտուսը էն նէվիճատ վէ միւքէմէլ սիւհալէրլէր վուշանմըլ օլաճագ տըր :

Տ Ա Խ Ի Լ Ի Է

Ֆիլիպէ չէհրին պէլէտիյէսի Պուլկար թիլլէթ պանգասընտան

100 տէ 6 ֆայիլլէ 7,000,000 ֆրանկիւրաղ իտէյօր : թէէմիսաթ օլարագ ֆիլիպէնին օգթրուա վէ գան վէրկիլէրի կէօրթէրիլիյօր՝ 50 սէնէտէն էտէմէք իւզրէ : Վիւքէլա մէճլիսի պու գարարը գապուլ իթմիշ օլուպ, Սօպրանիէնին թաստիգինէ իհալէ իտէճէք :

Վարնա պէլէտիյէսի տախի պու Խօլտա պիր իսթիգրաղլէ չէհրին ինշաաթ ու իսլահընա վագըթ էվլէլ թէշէպպիւս իթսէ ֆէնա օլմագ :

—Սօֆիա չէհրինտէ եէնի թահրիրի նուֆուս քեաղըտլարընտան 83,000 նուֆուս պուլընտըղանշալըլմըլ տըր : Պուստան 5 սէնէ էվլէլ 69,000 նուֆուս մէվճուտ ըտը :

Վ Ի Ճ Ա Կ Ա Հ Ա Ն Ո Ի Թ Ի Ի Ն

ՍՕՖԻԱ ՔԱՂԱՔԻ

Յակոր Կ. հաճիկարապիսեան յառաջիկայ փետր. 1 էն սկսեալ կը ծախէ Սօֆիա քաղաքի վիճակահանութեան տոմսերը :

Գիները՝ 1/4 ր 3 ֆր. 1/8 ր 1. 50

Ա Ձ Դ

Տ. Օննիկ Յակորեան (Մէզէճի) կը ծախէ իր վարձակալութեան տակ գըտնուող «Գաֆէ Սասուն» սըճարանի կազմաճըր ու կարասիքը :

Պատրաստ գործ փնտոռնիւր կրնան օգտուիլ այս առիթէն :

ԹԻԻՃԱՐԻՑԷ

ՎԱՌՆԱ, Յունվար.28

ՁԱՆԻՐԷ

ՊՈՒՂՏԱՅ			
Վալօն	54-60 լիպ.	9.80 / 11.	20
Արապա	52-62 լիպ.	9.60 / 11.	60
ԱՐԱՅ			
Վալօն 100 քիւ		11.70 / 12.	05
Արապա	42-47 լիպ.	6.50 / 7.40	
ԵՈՒԼԱՅ արապա	33/36 լիպ.	5.20/5.60	
Վալօն 100 քիւ		12.20/12.	85
ՅԱՍՈՒԼԵԱ արապա			
100 քիւ		24-28	
ՌԱԲԻՑԱ			
Արապա	100 քիւ	Խօք	
100 քիւ		Խօք	
ՏԱՐԸ արապա			
10/10		50	
ԲՕԼՕԶ արապա			
55-60 լիպ.		11./12	
ԽԻՍԻՐ 57-58 լիպ. առապա			
8.40/8.60			
» 100 քիւ		11.40- 11.70	
ՁԱՎՏԱՐ արապա			
9./9.60			
» 100 քիւ		13./13.50	
Կիւնտէ 10-15 վալօն վէ			
5-6			
արապա կէլմէքտէ. վալօն մուամէսիէ			
նաթօլէօն20 ֆր. արապա մուամէլէսի նաթօլէօն 20. 20			

Одговорникъ А. Курбетянъ
печатавъ а Д. Тодоровъ и С-не—Варна

